ՈՒՍՍԱՐԻ 2022-2023 / ANNÉE UNIVERSITAIRE 2022-2023
Փորձնական քննություններ/ Examens blancs
2-րդ կիսամյակ / 2ème semestre

ARMENIEN / ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

FORMULAIRE DE RÉPONSES / ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՈՒՂԹ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Բոլոր առաջադրանքները կատարել տրամադրված հարցարանների համապատասխան բաժիններում՝ առանց ավելորդ անգամ արտագրելու:

Առաջադրանք 1. (11 միավոր)
1.1. առաջադրանքը գնահատվում է 9 միավոր: Յուրաքանչյուր սխալ կետադրման համար հանվում է 0,25 միավոր, յուրաքանչյուր սխալ ուղղագրության համար՝ 0,5 միավոր:
1.2. և 1.3. առաջադրանքների ճիշտ պատասխանները գնահատվում են 1-ական միավոր:
Առաջադրանք 2. (7 միավոր)
2.1. առաջադրանքի համար տրվում է 3 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
2.2. առաջադրանքի համար տրվում է 4 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
Առաջադրանք 3. (8 միավոր)
3.1., 3.2. առաջադրանքների համար տրվում է 3-ական միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
3.3. առաջադրանքը գնահատվում է 2 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
Առաջադրանք 4. (8 միավոր)
4.1., 4,2 առաջադրանքները գնահատվում են 2-ական միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
4.3. առաջադրանքը գնահատվում է 4 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
Առաջադրանք 5. (6 միավոր)
5.1. և 5.2. առաջադրանքների համար տրվում է 2-ական միավոր. յուրաքանչյուր ամբողջական ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
5.3. և 5.4. առաջադրանքների ճիշտ պատասխանները գնահատվում են 1-ական միավոր:

Յուրաքանչյուր հարակից սխալի համար հանվում է 0,25 միավոր:

Առաջադրանք 1 (11 միավոր)

1.1. Անհրաժեշտության դեպքում լրացնել բաց թողած տառերը և կետադրել (9 միավոր):

Փորձնական քննություն

Իմ ճանապարհը հեշտ ու հանգիստ չի եղել: Շատ դառնություններ եմ ճաշակել՝ երեսիս փակված դռներ, հեզնանքով ու արհամարհանքով լի ժպիտներ, կատակով ասված չարախոսություններ: Մամուլն ու ռադիոկայանները քարկոծում էին, ես, սակայն, ձայն չէի հանում. իմ միջամտությունն ավելի կպղտորեր կյանքս: Ողջ օրը խրվում էի աշխատանքի մեջ՝ համոզված լինելով՝ ոչինչ չի կարող հաղթել օրական տասնհինգից տասնութ ժամ ջանքերին:

Բայց այս ամենի մասին չէ, որ ուզում եմ խոսել, ու պատճառը բնավ էլ այն չէ, որ ուզում եմ թաքցնել կյանքիս մութ անկյունները: Ի վերջո դժվար կյանքս ու խաբված սերերս են, որ ինձ դարձրին այն, ինչ կամ, ուստի համարձակվում եմ ասել՝ ես ինձ դուր եմ գալիս:

Մի օր՝ առավոտյան կողմ, արձանագրեցի. «Այն մարդը, որ ինքն իրեն չի ճանաչում, երբևէ ոչ մի բանի չի հասնի: Շնորհքը դեռ շատ քիչ բան է նշանակում. կարևորը սեփական թերություններից օգուտ քաղելն է»: Անվերջ թափառումներից հետո(,) ոտքերս մի կերպ քարշ տալով(,)՝ տուն վերադարձա, նստեցի աշխատասեղանիս մոտ ու մտածեցի՝ իմ պակասություններն են հասակս, որ անհնար է փոխել, շարժումներս՝ չոր ու գիրթ, որ բնորոշ են կարճահասակ մարդուն: Ճշմարտախոսությունս անուղղելի է. անարդարության հանդիպելիս ուզածդ մարդուն գրողի ծոցն եմ ուղարկում: Պետք է փոխեմ ինձ ու առաջ նայեմ: Իմ հենարանը ողջ ֆրանսիական երգն է, արմատներս՝ համաշխարհային մշակույթը, նաև հայկականը:

1.2. Նշել այն շարքը, որի բաղադրյալ հատուկ անունների բոլոր բաղադրիչները գրվում են մեծատառով (1 միավոր):

1. ՏԻԳՐԱՆ ԱՌԱՋԻՆ ՄԵԾ, ՍԱՌԻԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ԲՈՒՇ ԿՐՏՍԵՐ, ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏ, ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔ
2. ՖՐԱՆՍԻԱՅԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՈՐԴԻ ԴՅՈՒՄԱ, ՀԵՌԱՎՈՐ ՍՓՅՈՒՌՔ, ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ, ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ
3. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ, ՄԱՅՐ ՏԱՃԱՐ, ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼ, ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ, ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ
4. ՀՌՈՄԵԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ, ՎԱՍԱԿ ՍՊԱՐԱՊԵՏ, ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿ, ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

1. 3. Նշել այն շարքը, որի բոլոր բառերի բաղադրիչները գրվում են միասին (1 միավոր):

ա) տան (տիրուհի), աղի (բուդի), բառ (գիրք), ընդ (սմին), քաջ (առողջ)

բ) ց(տեսություն), ըստ (օրյա), հավուր(պատշաճի), բառ (գիրք), քառասուն(հինգ) ամյա

գ) տարեց(տարի), հարյուր (վեց)ական, կա՛նգ (առ), համ (ու) հոտ, լույս(ընծայում)

դ) մայր(իշխանություն), թև (ածել), դեմ (հանդիման), մի՞(թե), նոր(զելանդական)

2. 1. Տրված բառաշարքերից համապատասխան արմատներ ընտրելով՝ կազմել վեց բարդ բառ (3 միավոր):

Առտնին	ձյունածածկույթ	ծածկագիր // անցագիր
անգիտակից	սողցաձուկ	սղաճ
գրբաց	ընդամենը	ամենագետ
հանգաբառարան	առանցքակալ	անցաբառ // ծածկաբառ
որթատունկ	դիմագրավել	գրավատուն
հարաճուն	կոտորած	որթակոտոր

2.3. Ընդգծել այն արմատները, որոնց կարող է ավելանալ -ակ վերջածանցը (4 միավոր):

Վարդաբույր, խաժամուժ, դաշնամուր, առվույտ, դարավանդ, խոյընթաց, խաժ, գործունյա, սրվել, աղյուսապատ, ներքնաշոր, սոխուկ, մտամոլոր, ամենախոսուն, խառնամբոխ, մենաստան, ավազահատիկ, գիսաստղ, օդահեն, սողունազգի:

3.1. Ընտրել հոմանիշների վեց զույգ (3 միավոր):

Մերան, պատառ, թիրախ, փերթ, պատմուճան, որոգայթ, կանթեղ, մուժ, նշավակ, մարխ, վարմ, սոլ, մեգ, մակարդ:

Մերան-մակարդ, պատառ- փերթ, թիրախ-նշավակ, որոգայթ- վարմ, կանթեղ- մարխ, մուժ- մեգ:

3. 2. Ընտրել հականիշների վեց զույգ (3 միավոր):

Հետամտել, գոցել, շեղել, խուսափել, շտապել, պապանձվել, քաջալերել, պարտակել, ուղղորդել, բացել, ցուցադրել, սաստել, շաղփաղփել, սուրալ:

Հետամտել- խուսափել, գոցել- բացել, շեղել- ուղղորդել, պապանձվել- շաղփաղփել, քաջալերել- սաստել, պարտակել- ցուցադրել:

3.4 Գտնել այն շարքերը, որոնցում դարձվածքների իմաստների սխալ բացատրություն կա (2 միավոր):

ա) ձեռքից գալ – կարողանալ, ձեռքից գնալ – կորչել, մեկը հազար դառնալ - փշրվել, կուլ գնալ – մխրճվել

բ) քթի տակ – աննկատելի, ուշքի գալ – սթափվել, ուսերին նստել – հոգս լինել, արյունը ջուր դառնալ-ազգակցական կապերը վերանալ

գ) մեկը տասը շինել – չափազանցել, մի գլուխ –անդադար, ճակատը պարզ – պարզերես, հոգուն վրա հասնել – վերջին րոպեին օգնության հասնել
դ) ծանր խոսք – պարսավանք, իր կնիքը դնել – որոշել, մի բերան – քիչ, իրեն հավաքել – զգաստանալ

ե) լեզու առնել – հանդգնել, խոսքները մեկ անել – միաբանել, ձվի մեջ մազ փնտրող-բծախնդիր, խունկ ծխել – երկրպագել

4.1. Ընտրել և ընդգծել ճիշտ տարբերակները (4 միավոր):

Կհամաձայնվեմ, իրավազանցներ, կսառենք, առանց որոշում, դստրեր, չասեց, մի՛ շտապեցնիր, ըստ ցանկության, ասացի, բազուկոսկրներ, թռնում ենք, միացրեցի, խաչակնքել, պատշարներ, ի հակառակ քեզ, բացի ընկերս, ավանդամոլեր, կորչող, ձեր պես, հանձին քեզ, մեր մոտից, թռնատերեր:[1]

4.2. Փակագծերում տրված բառերը տեղադրել նախադասությունների մեջ՝ դրանք ենթարկելով համապատասխան փոփոխությունների (2 միավոր):

Այժմ անտառի խշշոցի հետ Եփրեմ պապի ականջին հասնում էին և՛ առվի քչքչոցը, և՛ թռչունների երգը. հնձի ժամանակ քանի՞ անգամ էր հաց կերել այդ առվի մոտ:

(թռչուն, պապ, ուտել, հասնել)

4. 3. Նշել փակագծերում տրված բառերի ճիշտ տարբերակը (2 միավոր):

ա) Ծերունու (հետնորդները, հետևորդները) սրբությամբ պահպանում էին նրա թողած մասունքները:
բ) Հայ զինվորը (անօրինական, անօրինակ) անձնազոհություն ցուցաբերեց ու հաղթահարեց բարձունքը:
գ) *Հայրենասիրություն* բառը (հասկացություն, հասկացողություն) է տալիս երկրի և նախնիների նկատմամբ մեր վերաբերունքի մասին:
դ) Միսաք Մեծարենցի (այլասիրությունը, այլասերությունը) հատկապես արտահայտված է նրա «Տու՛ր ինձի, տե՛ր» բանաստեղծության մեջ:

5.1. Գտնել և ուղղել խնդրառության սխալով նախադասությունները (2 միավոր):

1. Դարեր շարունակ արևելյան շատ ժողովուրդներ դավանել են բուդդայականություն:
2. Տան անդամներն անգամ անտեղյակ էին գիշերվա անցուդարձին:
3. Ծերունին իր ողջ հարստությունը կտակել էր ոչ թե զավակներին, այլ կնոջը ~~վրա:~~
4. Ամուսինը գլխով հասկացրեց, որ համաձայն է կնոջ ասածներին ~~հետ:~~

[1] Ութ ճիշտ պատասխանին տրվում է չորս միավոր:

5.2. Գտնել և ուղղել համաձայնության սխալով նախադասությունները (2 միավոր):

1. Նրանցից մեկը գալու էր ինձ հետ, մյուսները ճանապարհը շարունակելու էին անտառի արահետով:
2. Դրսում ցուրտ էր, և քաղաքի փողոցներում ոչ մի մարդ, ոչ մի կենդանի արարած ~~չէին~~ չէր երևում:
3. Ամբողջ ժողովուրդը երկյուղած կանգնել էր՝ ոստիկանապետի սպառնալիքներից իրեն կորցրած:
4. Այս ամենը վկայում ~~են~~ է, որ մենք մեր կանխատեսումներում չենք սխալվել:

5.3. Նշել բարդ ստորադասական նախադասության պարզեցման ճիշտ տարբերակը(1 միավոր):

Հայրս, քանի որ շատ ընդունակ է լեզուների հարցում, օտարերկրացիների հետ անկաշկանդ զրուցելու հնարավորություն ունի:

ա) Չնայած լեզուների հարցում շատ ընդունակ լինելուն՝ հայրս օտարերկրացիների հետ անկաշկանդ զրուցելու հնարավորություն ունի:

բ) Լեզուների հարցում շատ ընդունակ լինելու դեպքում հայրս օտարերկրացիների հետ անկաշկանդ զրուցելու հնարավորություն ունի:

գ) Հայրս, շատ ընդունակ լինելով լեզուների հարցում, օտարերկրացիների հետ անկաշկանդ զրուցելու հնարավորություն ունի:

դ) Հայրս՝ լեզուների հարցում շատ ընդունակ եղողը, օտարերկրացիների հետ անկաշկանդ զրուցելու հնարավորություն ունի:

5. 4. Նշել ուղղակի խոսքի փոխակերպման ճիշտ տարբերակը (1 միավոր):

_ *Ես սիրում եմ քեզ պես մարդկանց,- ասաց Մարութխանյանը Միքայելին և ապա ավելացրեց,- դիզում ես, ինձ խաբում, և միայն ծույլերը կարող են քեզ ագահ ասել:*

ա) Մարութխանյանը Միքայելին ասաց, որ ինքը սիրում է նրա պես մարդկանց, և ապա ավելացրեց, որ դիզում է, նրան խաբում, և միայն ծույլերը կարող են նրան ագահ ասել:

բ) Մարութխանյանը Միքայելին ասաց, և ապա ավելացրեց, որ ինքը սիրում է նրա պես մարդկանց, նա դիզում է, իրեն խաբում, և միայն ծույլերը կարող են նրան ագահ ասել:

գ) Մարութխանյանը Միքայելին ասաց, որ ինքը սիրում է նրա պես մարդկանց, և ապա ավելացրեց, որ նա դիզում է, իրեն խաբում, և միայն ծույլերը կարող են նրան ագահ ասել:

դ) Մարութխանյանը Միքայելին ասաց, որ նա սիրում է իր պես մարդկանց, և ապա ավելացրեց, որ նա դիզում է, իրեն խաբում, և միայն ծույլերը կարող են իրեն ագահ ասել: